

թեանն, որպէս մերժեցաւ Յուդա ի գնդէն սուրբ առաքելոցն՝ գնաց ի նմին գիշերի եւ պատմեաց մարգպանին եւ այլոցն ամենեցուն զխորհուրդ միաբանութեանն, եւ զերդումն Աւետարանին, եւ զխաւսս ամենայն նախարարացն Յայոց: 2 Չոր իբրեւ լսէր մարգպանն Ատրվշնասպն եւ այլ պարսիկ մարդիկն եւ ջոկք ուրացողացն Յայոց՝ սրտաբեկեալք զարհուրեին եւ անքունք լինէին զմնացորդ մասն գիշերոյն¹ յերկիւղէ: 3 Հասեալք ի ժամ առաւատուն՝ չուէին ի տեղւոյն եւ երթեալ բանակէին մաւտ ի պարիսպ բերդին, որ անուանեալ կոչի Անի. եւ առ աղէտի՝ խրատատուք² խաբէութեանն եւ մարգպանն կասկածանաւք կային զտիւն զայն անդէն, ծանուցանելով այլոցն ստուգիւ, թէ եւ վաղիւն անդէն լինին: 4 Եւ ի նմին գիշերի հեծեալք յուրաքանչիւր յերկվարս³ մարգպանն եւ հազարապետն եւ որք ընդ նոսա միաբանք էին՝ փախստականք լինէին: 5 Չոր զգացեալ նախարարացն Յայոց՝ հետամուտ լինէին զկնի փախստեցն. եւ վասն տեղեակ առաջնորդաւք փախչէին մարգպանն եւ հազարապետն, որ ընդ ուղղորդ տեղիս ճանապարհացն, այլ ընդ այլ եւ այլ տեղիս՝ զերծեալք անկանէին ի բերդն Արտաշատու. որոց ոչ կարէին հասանել նախարարքն Յայոց: 6 Բայց զգրաստ ամենայն Պարսկացն կասեալ ըմբռնէին ի ճանապարհին, եւ զՄախազն Գադիշոյ ձերբակալ⁴ արարին, ածէին ընդ ինքեանս. եւ հասեալք ի Դուին՝ երթեալ պաշարէին զբերդն Արտաշատու: 7 Իսկ մարգպանն եւ հազարապետն գաղտ ի գիշերի ելեալ ի բերդէն փախստեայ գնային ի կողմանս Ատրպատականի: 8 Եւ սեպուհ մի ուրծացի, որում անուն էր Վարազներսեհ⁵, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Յայոց, նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աներեր զշահաստանն Բռնավիժի, եւ առեալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց:

9 Իսկ ոմանք ի հայ նախարարացն ամբարշտելոցն խրատ տուեալ մարգպանին Յայոց Ատրվշնասպայ՝ ասէին, թէ «Թագաւորն Վրաց ապստամբեալ է եւ Հոն կամի հանել, բայց հանեալ⁶ չեւ եւս է. եւ դարձեալ՝ Յայոց առ կայսր զգնդէ յղեալ է, եւ դեռ չեւ եւս երեւի ի միջի. եւ ինքեանք չեւ եւս քաջ կազմեալ են, որպէս արժան է. եւ դու թէ այժմ փութով հասանես ի վերայ նոցա՝ դիւրով եւ թեթեւով վճարես զգործ մի կարի մեծ, եւ լաւ անուն յանձն առեալ՝ պատիւս եւ շատ պարգեւս գտանեմք յարքայից արքայէ եւ

1 Ձ. գիշերւոյն

2 Ձ. խրատտուք

3 ՏՏ. երկվարս

4 Ձ. ձերբակեալ

5 Ձ. վարազներսեխ

6 Ձ. բայց հանել